6 (103). ԳՈՂԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Տունըմ կելի։ Կելի կէրթա հարսնիք, պղտիկ աղչիկ կթողին քնուկ, կէրթան։

Տաս-աբսվերկու հոգի գիգան կմանին ըդոնց տուն գողութեն կէնեն։

Սընգրկներ կիտան իրար, լըխըրթոց թըխտոց կառնի աղչիկ, կհ՚իմնա կելնի կնստի կիլա։ Կըսե. «Ճըմուռ ուտե՞մ, չէ՞, էրթամ շըռեմ». Իրեք անգամ կըսե՝ «Ճըմուռ ուտե՞մ, չէ՞, էրթամ շըռեմ»։

Վալլա, կըսե. «Կելնիմ, կէրթամ շըռեմ»։

Կելի, մեկ բին կվազե խարանքաուն, կըսե.— Արե՛ք, մըր տուն գող է մտե։

Կելին կաշքին՝ հարսնքտուն ինչքան մարդ կան, գիգան կլցվին էդ մարդոց տուն։

Էն մեկ գողն կըսե.— Էդա աղչիկ շնութեն էրեց, հ՚ելավ, փախավ գնաց։

Էն մեկ կըսե.— Ջանըմ, հ՚ելավ, տեսավ օր ճրագ կվառի ու ուրընցնե մարդ չկա տուն, վախեցավ փախավ գնաց։

Հարսնքտան մարդիկ շատվոր կէղնին, գիգան կփաթին տան շորս բոլոր, գողեր կրոնին, կոպանին, ուրանց տան հ՚ուրումուր լե, օր լըցուկ կէղնի սնդկներ, կվերցան. տանին, դնին ուրանց տեղ։